



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 14 ՄԱՅԻՍ 1911

ԹԻԻ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Կիլիկիան եւ իր ստիպողական պէտքը
Ինչո՞ւ չես խօսիր (քերթուած)

ԾԱԳՈՒՄՆ ԵՅՐ. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ. — (Ա.) Մովսէս եւ
Դերովրա

Երեք մատուռներ (Մայիսի յիշատակ)

Հաւատքը (քերթուած)

Մտածումներ տիեզերքի մեծագոյն հանճարներէն

Սգահանդէս, Կիլիկիոյ ջարդերուն Բ. տարելիցին

ի յիշատակ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Գաւառի անապահովութիւնը. —

Կաթող. ընտրութիւնը. — Ազգ ժողովը. — Համագումարը. —

Շաբթուան լուրեր:

Հայ-կաթողիկ տազնապը

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ՍՈՒՐԷՆ Ծ Վ. ԳԱԼԷՄԵԱՆ

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

Ս. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ

Ս. Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԽԱԶԻՍԱՐ

ՀԱՆԳԻՍՍԱԿԱՆ

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Հանսա՛մ Մօղա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ Է. Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արեսասահմանի համար	» 10 Ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Չեռեկ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՐՈՍՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է ղիմել առ Զարմայր Բաճանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեռիկիա, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمي كليساسنده «داجار» غزتهسى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-

նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաթթեանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պօղար-
եան

ԱՅԻՕՆ ԳՐԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէիեան

ԲԱՔԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եպս.
Կիւլէսէիեան

ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան

ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքեան

ԵՐԶԵԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան

ԶՄԻՒՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաաուլեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատեան

ԿԻՒՄԻՒԼԺԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժ-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռուբէն Բհնյ. Պիպիեան

Շ. ԳՐԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան

ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեանեան

ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլըմեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Աւլանեան

ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաչեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաչեան.

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնեսիոս Բհնյ. Տրէդ-
եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան

ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրդեան

ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պուհ Բհնյ. Քիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պապ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան

ՖՐԷԶԵՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 14 ՄԱՅԻՍ 1911

ԹԻԻ 18

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԻԼԻԿԻԱՆ

ԵՒ ԻՐ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՊԷՏՔԸ

«Կիլիկիոյ եկեղեցեաց կարօտութիւնն այնքան բազմազան, եւ պէտքը այնքան բազմատեսակ է, որ ձեր գործունէութեան ստպարէզը սահմանափակել անհնար է, զձեզ մասնաւոր վիճակներու վրայ ձեռնադրելով: Պուք պիտի երբաւ ուր որ պէտք կայ, պիտի գործէք ուր որ գործ գտնէք:»

Տ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ֆունդի վանահայր Տ. Նիկողոս եպիսկ. ի մահը, որ հազիւ ամիս մը վերջը կը պատահի Կիլիկիոյ հորապսակ երեք եպիսկոպոսներու օծումէն, առիթ կուտայ ուշադրութեան առարկայ դարձնելու հոգեւոր եկեղեցական կա. ցութիւնը ուր կը գտնուի Կիլիկիան: Այդ կացութիւնը շատ հեռու է միւս. թարական ըլլալէ: Կարօտութիւնը բազմազան, պէտքը բազմատեսակ է այն տեղ. ու այդ բազմադիմի պէտքերուն գոհացում տալու կարող եկեղեցականութիւնն է որ հազուադիւս դարձած է, ամէն տեղ, բայց մանաւանդ Կիլիկիոյ մէջ: Պօռացող անար.

դարութիւններու. քով, որոնց վերջին ուշադրաւ հովոյն եղաւ Հասան Պէյլի եկեղեցին քանդումը՝ ամէնէն լուսաւ. միտ հկատուած կուսակալի մը հրաւանով, եւ որոնց դէմ սրտառուչ բռ. ղոքի ճիւղ մը միայն ունինք, անսելի միշտու դատապարտուած, — աւանդ, գրեթէ միշտ —, կայ ճշմարիտ եւ աւելի՛ խորունկ վերքը, այն որ բացուած է մեր անզգոյշ եւ անտարբեր վիճակին հետեւանօք, որ շարաւալից կը միայն «Լ փտախտի կը մօտենայ, պարզապէս տնոր համար որ այդ վերքը բուժելու կարող, պատրաստուած ձեռքեր կը պակսին: Այդ վերքը՝ հոգեւորապէս լքուած վիճակն է Կիլիկիային, օտար ուժերու, քակտիչ ներքին սարքերու դէմ, որոնք ուժգին կը գործեն, կը սարսեն Հայ եկեղեցին հիմերը, քարուքանդ ընել կը սպառ. հասն Հայ եկեղեցւոյ դարաւոր ամրաւ կառոյց շէնքը:

Օրաթերթերու թղթակցութեանց մէջ տխուր կը նկարագրուի այդ լքումը:

Գիւղեր, գիւղախումբեր ամբողջ, զուրկ կը մնան հոգեւոր մխիթարու.

թեանէ, եթէ իրենց անօթութեան կոտորանքներուն մէջ չտեսնան իրենց կտորկառուած գթութեան ձեռք մը, որ գոնէ պատահաւ մը հաց տար իրենց. եթէ պօռացող յայտնի անարգարութեան մը գէտ՝ պայքարելու համար չունեցան իրենց բողոքը լսելի ընել տուող հզօր ձայն մը, — աւագ, ամենէն հզօր ձայնն ալ մըմունջի մը ազդեցութիւնը չընեն կամաւոր խուլելու վրայ —, գոնէ չունեցան նաեւ՝ Կիլիկիոյ խեղճ գիւղացիները՝ գորովագութ հովիւներ որ կրօնքի կազմուող միութարութիւնն ընծայէր իրենց վհատած սիրտերուն, հաւատքի ներքին ոյժը ներարկէին անոնց յուսահատ հոգիներուն մէջ. հաւատքի առանց որու ոչինչ կարելի է գործել այս աշխարհիս վրայ հաստատուն ու տեւական. հաւատք նախախնամութեան վրայ որ երբէք տեւական չլուծի չի մասններ իրեն յուսացողները, հաւատք գերազոյն Արդարութեան վրայ որ գոյութիւն ունի միշտ եւ հոսկ ուրեմն գերազօր կը հանդիսանայ աշխարհային առերեւոյթ, կեղծաւոր արդարութեան վրայ, հաւատք՝ մանաւանդ՝ մարդուս իր ներքին ուժին, իր ընդունակութեանց, իր աշխատութեան, իր ջլապինդ բողոքներուն վրայ, որով արհամարհելով արտաքին ամէն աջակցութիւն — որ ստրկացնող ողորմութեան մը ձեւին տակ գունդեր կը համի —, ինքը կը պայքարի բախտին դէմ, ճակատագրին դէմ, մարդկային անարդարութեան դէմ, բռնութեան դէմ, պաշտպանելու համար իր կեանքը, իր պատիւը, իր դիրքը, իր աշխատանքի բարձր համբաւը ու այս ամէնը կ'ընէ, կամքի անհկուն ուժովը զօրացած, որ ճշմարիտ հաւատացեալներու յատուկ է:

Այդ տոկուն հաւատքը, այդ կեն-

սունակ ուժը ամէնէն հեռաւոր գիւղական մութ անկիւնները լքուած ժողովուրդին ջիգերուն մէջ ներարկելու համար մարդն է որ կը պակսի, ամէնէն աւելի հաւատքի՝ մարդը, կրօնքի՝ ներկայացուցիչը:

Մհ, Կիլիկիոյ շուրհազարդ Հայրապետը, ժողովրդասէր ճշմարիտ հովուապետի մը, քաջ հովիւի մը անձ. հուրբուրդները ցուցուց տառապանքի գոխերմբեր օրերուն. իր ժողովուրդին հետ տագնապեցաւ, անոր վիշտերովը վշտակրեցաւ, եւ սփոփանքի խօսքը տարածեց ուր որ կրցաւ, բայց միակ հովուապետ մը չի գործեր հաւաքելու իր ցրուած հօտը՝ երբ չունենար կարող աջակիցներ: Անշուշտ հորապսակ երեք եպիսկոպոսները, իրենց մօքի, սրտի եւ հոգիի բոլոր գոնձերովն եւ կամքի ուժովը՝ համաձայն զիրենք ձեռնադրող հովուապետին հրահանգին, պիտի երթան ուր որ պէտք է, պիտի գործեն ուր գործ գտնեն, բայց ա. հոնք ալ, եւ ուրիշ մասի վրայ համբողջ մէկ քանի վարդապետներ, որոնք ազգին համարումն ու վստահութիւնը կը վայելէին, չեն բաւել լրացնելու ժողովուրդին հոգեկան պէտքը որ համատարած է: Անոնք լուսաւոր ջահեր են մեծ հրապարակներու վրայ գրուած. որքան ալ պայծառ ըլլան, չեն բաւեր լոյս սփռելու տուններու խորունկ մութին մէջ: Հայ լքուած գիւղերու ամէն անկիւնները չեն կրնար համիլ անոնք ամէն ժամանակ. իրենց հովուական հազուադէպ այցելութիւնը չի բաւեր անցընելու ժողովուրդին ծարաւը՝ աւտարանաշունչ, սփոփարար խօսքի:

Ճակատին վերջերս կը կարգայինք նկարագրութիւն մը Անտիոքի գիւղերու Հայոց համատարած ողբալի կացութեանը. գիւղերու ուր հայ քահանայ չկայ, ուր դպրոց չկայ, ուր

իրենց զաւակներուն եթէ ոչ հաց, դ. նէ մաքի մնունդ ջամբող մէ'կը չկայ, միշտ լատին ու բողոքական հաստաւ տուեալներ՝ մատուռ եւ գարոց՝ կը ցցեն իրենց սէգ գլուխը, իրենց ձգեւ լով մաքի եւ հագի մնունդէ սովաւ տանջ ժողովուրդը:

Քանի որ եկեղեցական ազգային իրաւանց ներկայացուցիչի գերը աըրուած է հայ հոգեւորականութեան, այդ շահերը կը վառնալին մեծապէս, ցորչափ չկան իրենց գերը լաւ ըմբռնած, գոնէ միջակ գարգացման տէր հոգեւորականներ: Քանի որ, հակառակ հակադրոն եւ հակադիր սնիրաւ սրայքայնեբու, ամէն ողջամ'տ հայ այսօր կը հաստատէ եկեղեցիին եւ լուսամիտ գարգացեալ եկեղեցականութեան մը փրկարար գերը՝ նոյն իսկ ազգային գոյութեան տեռակէտով, անհրաժեշտ է ուժովցնել Հայ եկեղեցին, ամէն կողմ, բայց մանաւանդ կիլիկիոյ մէջ: Ատիկա կ'ըլլայ պարտաւեճով իր կոչումին գիտակից եկեղեցականութիւն մը, քահանայութիւն մը մասնաւորապէս:

Կիլիկիոյ շրջանակին համար Սիսի մայրավանքը ամենէն յարմար միջավայրն է այդ եկեղեցականութեան պարտաւորութեան համար: Անհրաժեշտ է վերաբանալ տփաւել կիլիկեան աւելաքին միջոցին փակուած գարոցը, ուր սակայն ամուրի եկեղեցականութեան հետ, եւ անկէ՝ տեւի, հոգ տարուի հասցնելու իրենց պաշտօնին իրաւէ'ս պարտաւորած քահանայութիւն մը: Ան է որ տեւական պաշտօնավարութեամբ մը պիտի կրնայ մըշտաւառ ճրագ մ'ըլլալ գիւղական մութ անկիւններու մէջ. ան է որ կոչուած է ժողովուրդին մէջ ապրել միշտ, անոր վշտերովը վշտակրել, անոր ուրախութեան մասնակից ըլլալ, ճանչ-

նալ միշտ, ու մտնել, ժողովուրդին հոգին, կրօնքի սփառարար շունչով ու գեւորել զայն, հաւատքի ուժը, կամքի ուժը ներարկել անոր թուլցած ջիգերուն մէջ:

Մենք վստահ ենք որ Ն. Ս. Օժուլթիւն Տ. Տ. Սահակ Կաթողիկոս, որ իբրեւ ժողովրդասէր Հայր մը ամենէն աւելի գիտակ է այս ստիպողական պէտքին, եթէ նոր կոչով մը հրաւեր ուղղէ Հայսէթեան՝ այս նպատակին իրագործումին համար, իր ձայնը պիտի լսուի սիրով, եւ գոնէ յառաջիկայ տարեշրջանին մէջ թերեւս կարելի պիտի ըլլայ վերաբանալ փակեալ Դպրանոցը: Տաճարի էջերը լոյսօրէն բաց են այս նպատակին իրագործումին անհրաժեշտ ամէն կարգի հրատարակութեան համար:

ԶԱՐԲԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ

Պէրպէրեան Ագահանդէսի Գանձաւար մը եւ Յ. Ռ. Պէրպէրեան Կուգան հրապարակաւ իրենց շնորհակալութիւնը յայտնել ըզոր տնոնց, որ ի յարգանս Ոգրացեալ մեծանուն Ռատցչապետին անուն սորքում սգահանդէսին բարեհաճեցան իրենց ներկայութեամբը կամ ի նուրս մասնակցել (1)

Վ Ր Ի Պ Ա Կ

Տաճարի 16 թիւին 250րդ էջին մէջ Պէրպէրեան Ագահանդէսին նուիրուած հատուածը, գրաչարական անուշագրութեամբ մէկ երկու աչքառու սխալներով ապրած է, զորս կը փութանք ուղղել. —

Տող Սխալ	Ուղիղ
4 Ըմբոստ բանախօսներ հմուտ բանախօսներ	
5 հոգոցելոյն	հանգուցելոյն
7 հակակոյտին	հողակոյտին

(1) Նիւթերու տառաւորան պատճառով կարելի եղած չէր անցեալ շարժու հրատարակել այս հատուածը:

ԻՆՉՈՒՆ ԶԵՍ ԽՕՍԻՐ...

Ինչո՞ւ չես խօսիր, սոխակ գեղեցիկ.
Իայլայլիկներէդ անոյշ ու մեղմիկ
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, ծիծեռնակ սիրուն.
Իարնան երգերէդ՝ յուզիչ, հոգեսուն
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, կռունկ օդաւազ,
Ա՛հ, խապրիկներէդ երկիրէս բերած
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, աղանի-տատրակ,
Քու վրովուններէդ տխուր ներդաշնակ
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, Ֆուռակ կռածայն,
Քու Ֆախրանքներէդ սուր եւ անման
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, հոգի՛ս մանուշակ,
Քու բուրումներէդ անոյշ, անապակ
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, ծաղիկդ նաշղուն.
Հոտէդ, հմայքէդ, դիւթիչ ու սիրուն
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, ծովակդ ծիծղուն,
Քու կոհակներէդ շաղ ու շողշողուն
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չես խօսիր, ո՛վ լեռ բարձրադիր.
Վարդ ծաղիկներէդ՝ այլազան ու բիւր
է՞ր զիս կը զրկես,
Ձի պանդուխտ եմ ես:

Ինչո՞ւ չէք խօսիր, երկնից լուսաւորք,
Դո՛ւք, արեւ, լուսի՛ն, աստեղք բիւրաւորք

է՞ր զիս կը զրկէք,
Ձի պանդուխտ եմ հեգ:

Ա՛հ, խօսեցէք դուք խօսեցէք հերթով
Ձի պանդուխտ սրտիս, ծուխ, մոլխ,
կրակ ու բոց
Մարին ձեր ձայնով, հոտով ու շաղով
Մինչ օր մը դառնամ սիրելեացս ծոց:

ՍՈՒՐԷՆ Մ. ՎԱՐԴ. ԳԱԼԷՄԵԱՆ
Կարին

Ծ Ա Գ Ո Ւ Մ Ն

ԵՐԱՅԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Ա.

Մովսէս, Դերովրա (*)

Իսրայելի որդւոց մէջ տիրապետած
էր արդէն կռապաշտական այն կուրու-
թիւնը, որ հասարակ եղած է հին դարե-
րու բոլոր ժողովուրդներուն, եւ որուն
դէմ նոր սանձ մը կ'ուզէ գնել Մովսէս՝
եանձէի պաշտօնը ներմուծելով իր առաջ-
նորդած ժողովուրդին մէջ: Ապագայ մար-
գարէութիւնը Մովսէսի այս գործը պիտի
շարունակէ, աւելի բո՛ւն ու աւելի որոշ
ուղղութիւնով մը:

«Միթէ սպանդ եւ զո՞հս մատուցէք
ինձ, — Յանապատի անդ զքառասուն ամ,
տունդ Իսրայելի.» կը գոչէ Ամովս:

«Այլ առէք զխորանն Մողոքայ,
եւ զՔիուն պատկերաց ձերոց,
եւ զաստղ աստուծոյն յերոյ զոր ա-
րարէք ձեզ...» (1):

Այս տեսակէտով, իրաւցնէ, կ'արժէր
երբայական մարգարէութեան հայրը կոչել

(*) Շար. նախորդ (17րդ.) Թիւէն:

(1) Ամովս Ե. 25, 26: Իսրայելի կռապաշտու-
թիւնն ու բազմաստուծեան նկարագիրը հասկնա-
լու համար կ'արժէ ուշի ուշով համեմատել նաեւ.
Եզեկ. Ժ2. Ի. ԻԴ. 8 եւ. ԻԴ. 14. 23: Բ. Թր. Դ. 17
և. Ժ2. 21 և. ԺԷ. 3 և. ԺԸ. 10: Ծննդ.
ՀԱ. 19: Ա. Թգ. ԺԹ. 13: Դ. Թգ. ԻԱ. 6: Դատ.
ԺԷ. Ովս. Դ. 4: 2 և. Եր. ԼԲ. 35: Միք.
2. 7. Դատ. ԺԱ. 31: Բ. Թգ. ԻԱ. 1: Ա. Թգ. ԺԵ.
33 և. և. և.

զՄովսէս: Մովսէս իր կրօնական ըմբռնութիւններուն մէջ միաստուածեան (monotheiste) մը եղած ըլլար եւ կամ մենաստուածեան (hénotheriste), ինչ որ կարելի չէ երբէք ապացուցանել(1), սա ստոյգ է թէ՛ Նահվէի պաշտամունքը Իսրայելի մէջ միակ ու տեւական ընկու համար՝ ամէն կարելի միջոց գործածած էր ան. կրկնած էր իր ժողովուրդին մէջ դնել այն տարբերը, որոնք ճշմարիտ, արդար ու միակ Աստուծոյ մը գաղափարն աւելի պիտի ամրապնէին, եւ ծնունդ պիտի տային այնպիսի անհատներու՝ մարգարէներու, որոնք իր գործը պիտի շարունակէին աւելի անկախութեամբ ու անհատականութեամբ, աւելի տեւական ու շարունակական ճիգով մը:

Անշուշտ Մովսէսի ժամանակ, թէեւ մարգարէութիւնը շատոնց գոյութիւն ունէր արդէն, սակայն տակաւին որոշ նկարագիր մը ստացած չէին մարգարէներու ապրելակերպն ու պաշտօնը, տակաւին հաստատուած չէին մարգարէական գրգռողները, մարգարէութիւնը մասնաւոր անձերու առանձնաշնորհը եղած չէր դեռ: Մովսէս մարգարէ մըն էր բառին ամէնէն լայն իմաստովը. մարգարէ մըն էր, ժողովուրդին առաջնորդ, Նահվէի եւ անոր միջեւ միջնորդ, որ Աստուծոյ պատգամներն ու կամքը կը հաղորդէր: Իրմէ ետքը մինչեւ Սամուէլ ոչ ոք պիտի ըլլար, անշուշտ, որ այնքան նշանակալից տեղ մը պիտի կրնար գրաւել մարգարէներու շարքին մէջ: Այս ըսել չէ, սակայն, թէ իսպառ զոյութիւն ունեցած չեն այնպիսի անձեր, որոնք արժանի եղած ըլլան մարգարէ անունին, եթէ ոչ Մովսէսի գործերն ունենալով, գէթ անոր գործը շարունակելով:

Այս տեսակէտով, թերեւ, ամենէն աւելի աչքառու տեղ մը պիտի գրաւէր

(1) Tieleի վարկածը միշտ վարկած մը կը մնայ այս մասին, ցորչափ դրական ապացոյցներով չկրնար հաստատուել զայն, և հետեւորար աւելի լաւ պիտի ընէր, եթէ իր նախադասութիւնները հարցական ու տարակուսական ձեւով մը շարելէն ետքը, թողէր ու անցնէր:

Դեբովրա, Իսրայելի այդ ճշմարիտ «մայրը»: Իբրեւ պաշտպան ու քարոզ Նահվէի պաշտամունքին, որ արդէն ազգային հանգամանք մ'առած կը թուի Դատաւորաց այդ խառնակ շրջանին, մեծ գործունէութիւն մը ցոյց տուած պիտի ըլլայ այդ կինը, Իսրայելի յիշատակներուն ու պատմութեան մէջ այնքան կարեւոր էջ մը գրաւած ըլլալուն համար: Նահապետական ցեղերու մէջ կիներու դերը չատ աւելի բարձր եղած է միշտ քան որչափ չէր եղած Սողոմոնի ժամանակ, երբ ընտանեկան եւ ամուսնական կեանքի յարաբերն ապականսած ու խնկած էին բոլորովին: Մարիամ, Մովսէսի քոյրը, Նաբիպոսէն եւնիւն միջոցին, ցոյց կուտայ իր վրայ այն առնական կորովն ու ոգին, որ յատուկ էր անշուշտ նահապետական կեանքի մը պայմաններուն մէջ բուսած եռանդուն ու հանճարեղ կնոջ մը: Իսրայելի Բանանու երկրին նուաճման միջոցին, Յեսուէն շատ տարիներ ետքը, նահապետական կեանքի կնիքը կը կրէր տակաւին իր վրայ: Ահա այս շրջանին ամէնէն վաւերական եւ ամէնէն նշանաւոր ղեմերէն մին էր Դեբովրա մարգարէուհին, որուն դերը կ'արժէր քիչ մ'աւելի լայն գիծերու մէջ ներկայացնել: Այս քաջ եւ ազնուական կինը իրաւցնէ կը ներկայանայ մեզի՝ մարգարէական ու բանաստեղծական այնպիսի լուսապսակով մը, որ իր գործունէութեան ու կեանքին պտուղն է անշուշտ:

Յարին, Ասովրի մէջ նստած քանահայր թագաւոր մը, իր զօրապետին կամ աւար-աւաքաին, Սիսարայի միջոցաւ ընկճած՝ նուաճած էր ամբողջ Տիւսիսի Իսրայելացիները, ու կը նեղէր զանոնք: Այս իշխանին ինն հարիւր երկաթի կառքերը Իսրայելի որդւոց սարսափը եղած էին: Այս ատեն կ'ապրէր Իսրայելի մարգարէուհին: Դեբովրա սովորաբար կը բնակէր Արմաւենիի մը տակ զոր «Դեբովրայի տրմաւենին», կը կոչէին(1), Ռամայի եւ Բեթելի միջեւ, Եփրատի լեռանց

(1) Դատ. Գ. 5.

մէջ, եւ Իսրայելացիները անոր կ'ենէին Աստուծոյ դատաստաններն իմանալու համար անկէ։ Մարգարէութիւն բոլորովին նուիրուած էր Եանգլիի պաշտամունքին, եւ չէր ներեր, անշուշտ, ժողովուրդին տկարութեանց՝ քանանական աստուածներու պաշտամունքին նկատմամբ։ Դերովրա ձեռք կ'առնէ իր ժողովուրդին փրկութեան յոյժը։ Յանուն Եանգլիի հրահան կը դրիէ Բարակ անուն Նեփթալիմեան անձի մը՝ հաւաքել 10,000 այր՝ Նեփթալիի եւ Զաբուղոնի բնակիչներէն, եւ յարձակմամբ վանել Սիսարան ու իր բանակը։ Ինքն իսկ հետո առնելով Եփրեմի, Բենիամինի եւ Մանասիի ցեղերէն բաղմաթիւ զինուորներ, կուգայ միանալու Բաբակի, որ չուզեր պատերազմիլ առանց Դերովրայի ստաջնարգութեան։ Սիսարա սաք կ'ենէ։ Իսրայելացիք կը յարձակին ու կը գրուին Յարին զօրապետին բանակները։ Սիսարա հետիտն կը փախչի, Բարակ կը հետապնդէ զանի։ Պաղեստինի հիւսիսային կողմը բնակող Թափասիկ ցեղ մը, կ'ինեցիք, որ թէպէտ խաղաղութեամբ կ'ապրէին Ասովրի իշխանութեան հետ, բայց Իսրայելացւոյ հետ միշտ լատ յարաբերութեան մէջ եղած էին, չուտով վերջ մը կուտան պատերազմին։ Սիսարա կը հասնի կ'ինեցի վրանի մ'առջեւ։ Վրանին տէրը բացակայ էր, կ'ինը՝ Յայէլ կը հրաւիրէր փախստականը ներս մտնելու համար, ու կը ծածկէր զայն վրանին վազողներուն տակ։ Սիսարա քիչ մը ջուր կ'ուզէ։ Յայէլ կ'ախին տիկը բանալով կը խմցնէ անոր ու կը ծածկէ անոր գէմը, որ յագնութենէն շուտով կը թմրի ու կը քնանայ։ Այն ատեն Յայէլ վրանին խոշոր ցիցերէն մին առնելով, զգուշութեամբ ներս կը մտնէ եւ ցիցը կը խօթէ անոր ծամելեաց մէջ, ու այսպէս գետնին վրայ կը վարէ անոր գլուխը։ Բարակ կը համարի Ամէն բան յրացած էր։

Այն ատեն Դերովրա եւ Բարակ սկսան հրգել եւ որհնել Եանգլիին։—

Յառաջնորդել առաջնորդաց յիսրայելի,
Ի նուիրել ժողովրդեան զաննն։

Օրինեցէք զՏէր։

Լուարոք, Թագաւորք, եւ ունկնդիր լերոք,
Նախարարք։

Եւ, երգեցից Տեառն,
Եւ աղմուս առացից Տեառն Աստուծոյ իսրայելի։
Տէր յեղանել քո ի Մէիրայ,
Եւ ի ջուել քում յանդատումացն Եդովմայ՝
Երկիր շարձեցաւ, երկինք կամեցուցին,
Ամպը ցօղեցին ջուր։
Երկինք շարձեցան յերեսաց Տեառն,
Սկնա իսկ, յերեսաց Տեառն Աստուծոյ իսրայելի։

Յառաջ Սամեաւոյ որդւոյ Անանայ,
Յառաջ Յաւելի պալատեցին Տանապարհք,
Եւ որ գնացին ընդ յաւիտ, գնացին ընդ Տանապարհս կամակորս։
Պալատեցին վարդապետք յիսրայելի, պալատեցին,

Անցեալ յարեաւ Դերովրա,
Անցեալ յարեաւ մայր իսրայելի։
Ընտրեցին Աստուածս Նաբս,
Յայնժամ պատերազմ ի դրունս։
Եւ ոչ գոյր վախան, եւ ոչ գեղապուն,
Ի մէջ քառասուն հազարաց իսրայելի։
Սիրան ի մի վերայ իշխանացն իսրայելի,
Նախատակք ժողովրդեանն, օրինեցէք զՏէր։
Հեծեալք ի վերայ իշոց սպիտակաց,
Նստեալք յատեմա տանակալաց,
Եւ որ չըջիք ի Տանապարհի,
Երգեցէք։
Ի ծայն յարբառոյ աղեղնաւորաց ի տելիս ուր
հանի ջուր,

Անդ երգեցն զփառս Տեառն,
Զփառս իշխանաց իւրոց իսրայելի,
Յորժամ էջ ի դրունս ժողովուրդ Տեառն։
Զարմիր, զարմիր, Դերովրա,
Զարմիր, զարմիր, խօսեաց երգովք,
Արի, Բարակ։
Դերեա զգերութիւն քո, Որդի Արինէնայ։
Յայնժամ էջ մնացորդն ընդդէմ զօրաւորաց,
Ժողովուրդ Տեառն էջ ընդդէմ հզօրաց։

Ապա խօսք կ'ուղղուի Իսրայելի այն ցեղերուն որոնք մասնակից եղած էին Սիսարայի գէմ մղուած պատերազմին։ Եփրեմը, Բենիամինը, Զաբուղոնը, Իսաքարը, Ասեր, Գադ եւլն, հետզհետէ նիւթ կ'ըլլան գովեստներու եւ յիշատակութեան։ Եւ ապա կը շարունակուի։

Հաւին Թագաւորք եւ Տակաւեցան,
Յայնժամ մարտնան Թագաւորք Բանտնացոյ,
Ի Թանաք, ի վերայ ցրօցն Մակեդոնայ։
Զագափութիւն սրժանոյ ոչ տալն։
Յերկնից Տակաւեցան աստեղք

Յիւսաքանդիւր յօրինուածոց , ետուն պատերազմ
ընդ Սիւսարայ :
Հեղեղատն կիսոնի մարմեաց զնուա ,
Հեղեղատն ի վաղուց , հեղեղատն կիսոնի :
Յայնժամ կարծակոտորք եղեն գարշապարք երկ-
վարաց :
Յարշաւանաց , յարշաւանաց զօրութեանց նորա :

Նզովեցէք զՄարովզ . (1) ասէ հրեշտակն Տեառն .
Անիծանելով անիծէք զբնակիցս նորա .

Ձի ոչ եկին յօգնականութիւն Տեառն ,
Յօգնականութիւն Տեառն ի մէջ հզօրաց :

Օրհնեալ լիցի ի կանայս Յայէլ ,
Կին Քարերայ Կինեցայ ,
Օրհնեացի ի կանայս ի խորանի :

Ձուր ինդրեաց ,
Եւ ետ կամեն ,

Դաշխուրմնու գլխուորաց մատոյց կոգի :
Ձէռն իւր ձգեաց ի ցիցն ,
Եւ զաջ իւր յուռն գործաւորաց ,
Եւ վախճանեցոյց զՍիւսարա , վարսեաց ընդ ծա-
մելիս նորա ,

Եւ անցոյց ցից ընդ գլուխ նորա :
Ի մէջ ոտից նորա կորացաւ . անկաւ , զգետնեցաւ .
Ի մէջ ոտից նորա կորացաւ , անկաւ ,
Ուր կորացան , անդ անկաւ . կործանեալ :

Ընդ պատուհանն , հայեցաւ եւ գոչեաց
Մայրն Սիւսարայ ընդ վանդակապաւան .
« Ձի՞ յետնեցաւ . կառք նորա ի գալոյ :
Ընդէ՞ր յամեցին հետք կառաց նորա : »
Կանայք ինաստունք նորա ետուն անդրէն պա-
տասխանի նմա .
Եւ ինքնին անծամբ անծին տունէր իւր պատաս-
խանի .

« Ո՞չ ապարէն գտանեն , բաշխեն աւար ,
Աղջիկ մի . նա՛ւ աղջկունս երկուս առ այր .
Կապուտ երանգոց՝ վասն Սիւսարայ ,
Կապուտ երանգոց նկարակերտ .
Երանգ երկուսանք նկարէն՝ պարանոցի նորա
կապուտ : »

Այսպէս ամենայն թշնամիք քո , Տէր ,
Եւ որք սիրիցենն զքեզ , իբրեւ զեւ արե-
գականն ի զօրութեան նորա : (2)

Մարգարէուհւոյն արտադրած այս գե-
ղեցիկ կտորը երկար տարիներ Յակոբի

(1) Հաւանաբար Պողեստինի հիւսիսային կողմը
գտնուած երկիր մը , Թափօրի մօտ , որուն բնակիչ-
ները օգնած էին Սիւսարայի և իր հետեւորդներուն ,
փախուստի ժամանակ :

(2) Դատ . Ե .

որդւոց յիշողութեան մէջ քանդակուած
էր , մինչեւ որ գրի կ'առնուի ան ու կ'ամ-
փօփուի Իսրայէլի գիւցաղն սկան չըջանի
յիշատակարանին մէջ : Բնականաբար բեր-
նէ բերան անցած ատեն փոփոխումներու
ենթարկուած պիտի ըլլայ ան .— « Բազմա-
թիւ հատուածներ խրթնացած են ընդօրի-
նակողներու թերութեամբ . բայց Նբր . հին
շիրին ինքնատուութիւնը աննման չողով
մը կը փայլի այս բոլոր խանգարումնե-
րուն մէջէն » , կ'ըսէ ԺԹ . դարու մեծ եր-
րայագէտներէն մին : (1)

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

(Շարունակելի)

ԵՐԵՔ ՄԱՏՈՒՌՆԵՐ

(Մայիսի Յիսուսի)

Մայիսի առաջին օրն է :

Կիրակի . արշալոյսին , կը մեկնինք Օ .
գիւղը երթալու համար :

Դաշտերը ծաղկալից , բլուրները դա-
ւարաւէտ , երկինքը ծիծաղկոտ է . տեղ
տեղ թուփերու շուքին տակ պահուցած
մանիշակները իրենց անու . բուրումներով
կը զգացնեն իրենց գոյութիւնը :

Ճամբանիս փոքրիկ գիւղէ մը կ'անցնի ,
որ ծործորներով չըջապատուած , բլուրի
մը վրայ կանգնած է :

Նորածագ արեւուն ճառագայթներուն
տակ կանաչազարդ արտերը և գիւղին
մատուռին զանգակատունը կը փայլին :
Չորակէն եկող թռչուններու գեղգեղանք-
ներուն հետ , մատուռէն գոհարանական
երգերու ձայներ կը լսուին : Ներս կը
մանենք . խուռկի հոտէն զգլխած , հոգե-
զմայլ շարականներու դաշնակութենէն
հիմնուած մի քանի տասնեակ ժողո-
վուրդ հիացիկ ու անշարժ աչքերնին վերը
խորանին յառած են . կ'աղօթեն . . .

Մարդերու այս մտամոխի պաշտամուն-
քը , դուրսի . բնութեան համերգին քաղ-
ցրութիւնը կը մոռցնէ ինձ . անպաճոյճ
այդ տաճարը , դաշտն ու հոգեխօսիկ եր-
գերը պահ մը կը հիացնեն զիս :

(1) Benan's Hist. du peuple d'Israël T. I. P. 316

* * *

Վարի ձորակին մէջ ենք, ուրոտպտոյտ ճամբաներ առուներով տամկացած կածան. ներու մէջ կ'առաջնորդեն մեզ, ուրկէ կը լսենք գարնանաբեր թռչունին արծա. գանգոյ ձայներ:

Կո՛ւ, կո՛ւ, կո՛ւ:

Օ. գիւղը հասած ենք. գեղեցիկ լեռ. նադաշտ մը կը դիտէ Մարմարան որ խա. ղաղ ու յուշիկ կը տարածուի վարը Նի. կոմիդեան ասիւրուն քով:

Մայիս է, հազիւ քիչ մը հանգչած, կապոյտ ու անամայ երկինքին տակ պար. տեղներու քովն ի վեր երկնալու փափա. քին չենք կրնար դիմադրել:

Գիւղին մանարանին պարտեղն ենք. ու ահա փոքրիկ գանգակի մը գանգիւնը կ'աղդարարէ մեզ որ աղօթարանի մը քով կը գտնուինք: Զանգակին ձայնէն առաջ. նորդուած, կ'երթանք թթաստաններու մօտիկ փոքրիկ աղօթարանը, որուն պարզը միայն իր պարզութիւնն է: Ցանցառ թի.ւով հաւատացեալներ փայտէ նստարան. ներու վրայ նստած մօտիկ կ'ընեն քարոյի. չին խօսքերը, որոնք բարոյական խրատներ են, Աստուածաշունչէն քաղուած:

Ամէն մարդ ինքն իր մէջ ամիտփութած է. լռիկ խորհրդածութեան, ներհայեցողութեան վայրկեաններ կը սահն, մինչ դուրսը պարտեղին մէջ, ծառերուն տե.րեւները մեղմօրէն կ'երերան մայիսեան սիւզին անուշ շունչին հպանցումէն:

«Աստուած իմ, մարդս ինչ է որ կը յիշես»:

Դաւիթին այս խօսքն է որ կ'արծա. գանգէ փոքրիկ աղօթարանին ձերմակ պատերէն ներս, ուր ժողոված երկսեռ հաւատացեալները ընդոսա կ'ուշաբերին այդ ձայնէն ու անոր յաջորդող պատաս. խանէն:

«Մարդը հոգի է, մարդը բարոյական էակ մըն է . . . »

Քարոզը վերջացած է, աղօթարանը թնդացնող համերգով մը: Դուրսը միջօրէի հոծ տաքութիւն մը կը ծանրանայ պարտեղ. ներու քովն ի վեր, ուր խորհրդածութիւն. ներս կը թեւադրեն ինձ:

«Մարդը հոգի է, բարոյական էակ մըն է . . . ուրեմն մարդը գարնան հետ հոգեկան զարթնում մըն ալ պէտք է ու. նենայ. հոգին ալ պէտք է ունենայ իր Մայիսը . . . »

* * *

Գիւղին ամենարարձր դիրքին վրայ ենք:

Հոն է Ս. Եղիային մատուռը, գեղացի. ներուն ուխտատեղին, ուր վստող երեք մօմեր քիչ մը առաջ բարեպաշտ շրթնե. րու վրայ մարած աղօթքներու շունչովը կը հեւան գեւ:


Լուռ եւ սուրբ պաշտամունքը խոր. հրգանշող այս ուխտատեղիէն մարդուն նայուածքը կ'իշխէ օդակ օդակ իրարու կցուած դափնեզարդ բլուրներուն վրայ, որոնց ստորոտը, օծապտոյտ ձորակին մէջէն, դարիւ դարիւ կը հոսի գետակը հեղա. մրմունջ, ու կ'երթայ հեռուն կը տարած. ուի դաշտին մէջ արծաթի երկի մը պէս:

Ու կը մտածեմ թէ մեր հոգիներն ալ սա վարը հոսող գուլալ ջուրին եւ վերը պարզուած պայծառ երկինքին պէս մաքուր ու յստակ պահելու համար, մարդ. կային ստորնութիւններէն վերը գտնուող սա ուխտատեղիին մէջ, ուխտ մը ընել որչա՛փ հաճելի կրնայ ըլլալ Աստուծոյ սա մայիսի առաջին օրը, երբ համայն բնութիւն նորոգութիւն եւ թարմութիւն մը կը գգնու:

Այս տարուան մայիսէն մնացած յիշա. տակը ամենահաճելին պիտի ըլլայ ինձ, այդ երեք մատուռներու պատճառով: Ա. նոնցմէ առաջինին մէջ վերացայ, երկրոր. դին մէջ խորհեցայ. եւ երրորդին մէջ ա. ղօթեցի, հոգիս ալ պէտք ունէր այս եր. րորդութեան:

Ս. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ

Նիկոմիդիա



Հ Ա Ի Ա Տ Ք Ը

Ձի նանդէս ձերոց նաւասցի...

Պատուական է:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔ

Ներշնչութեամբ մարգարէներն Ուխտին Հին,
Որոտացին պատգամներ,
Իսրայէլին ցուցնելու պէտքն հաւատքին.
Այդ երկիրոյի հաւատքն էր:

Պաղեստինի երկինքին տակ տաժակէզ,
Հաւատք ունի՞ր կը մնջէր,
Մշտաշրջուն ու սիրածարձ Յիսուան հեզ
Ո՞հ, այս սիրոյ հաւատքն էր:

Սիրոյ կրօնին առաքեալներն ալ բոլոր,
Քարոզեցին նոյն հաւատք,
Առ հաւատքով կրեցին տանջանք թիւս անլոր,
Եղան շատեր նախատուկ:

* * *

Առանց հաւատքի
Կեանքն է շարունակ,
Տարակուսանքի
Անդունդ անյատակ:

Առանց հաւատքի
Մարդը թշուառ է,
Առանց հաւատքի
Հոգին թախծո՞ւ է:

Հաւատքով միայն
Պիտ' վերաթեւենք
Դէպի տեսլական
Լուսափայլ բարձունք:

Ունի՞մ կուրծքիս տակ
Կայծ մը հաւատքի,
Ատով կրնամ յար,
Վրայ ոսկեջնար
Սեմին նո՞ր կեանքի,
Ոգել «ոյս զուարթ»ս
Դահլիճին առջեւ
Սիրոյ Աստուծոյն:

Ս. Տ. ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԵԱՆ

Մարաշ



ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՏԻԵՋԵՐԲԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՆՃԱՐՆԵՐԷ(*)

ՄԱՐԴԵ

Ա.

Մարդս միշտ կատարելագործելի էակ
մը ըլլալով, պէտք է դադրի զարգանալէ,
ինքզինք մշակելէ:

Բոլոր բարի առակներն աշխարհիս մէջ
են. մարդիկ կը թերանան զանոնք կիրար-
կելու:

Մարդ եմ ես, ուրեմն ոչ մէկ բան զիս
անտարբեր չի թողուր որ կը շահագործէ
մարդկու թիւնը:

Դարերու փորձառութիւնն անգնահա-
տելի օժանդակ մ'է մարդուս:

Այնպիսի ատեն մը կ'ապրինք, յորում
ընկերական կեանքի մէջ ինքնասիրու-
թիւնն ոչ միայն մոլուկիւն մ'է, այլ
վստանգ մը:

Վեհապետ ժողովուրդն իրեն յատուկ
ճակատագիրն ինք պէտք է որոշէ. սպա-
քէն մեծ պատիւ, բայց մի եւ նոյն ատեն
ծանր բեռ:

Անձնիւր ոք պէտք է որ խղճամիտ
ըլլայ իր պարտականութեանց մէջ, եւ իր
բաժնին ինկած զոհողութիւնը կատարէ:

Ժողովուրդին ռահվիրաները պէտք է
զգուշանան այն ամէն մտածումներէն, որ
կարող են զայն առաջնորդել սկեպտա-
կանութեան, վհատութեան կամ յոռետե-
սութեան:

Ընդհակառակն ամեն անգամ ուժեղ,
մարդավարի եւ սիրտը բարձրացնելու
յատուկ զաղափարներ պէտք է ներշնչել,
յաւագոյն զգացումներ մշակել, օգտակար
ճիգերը դրդուել, պարկեշտ գործերը խրա-
խուսել եւ իրեն բռնելիք ընթացքը դի-

(*) Հաճոյքն ունինք ներկայացնելու աշխարհի
լաւագոյն գրողներու և խորհողներու լուրջ մտա-
ծումներէն և առակներէն բաղաւաճ մը, որ պար-
բերաբար պիտի երեւայ Յաւատքին մէջ, և զոր հա-
ւատքած է Հայ գրական և ընկերային կեանքին մէջ
կարեւոր դիրք ունեցող անձնաւորութիւն մը, որ
ինքզինքը ԽԱՅԻՍԱՐ ծածկանուան տակ կը պահէ:
Ծ. ԽՄԲ.

բացնել. այս պէտք է ըլլայ ժողովուրդին ռազմիրաներուն մտածումը:

Մարդս անկատար բան մ'է որ անպարար կը ձգտի լուսագոյնին եւ իրմէ աւելի մեծին:

Եթէ մարդս իր ամեն կատարելութեան հասած ըլլալով իսկ առաջինն է կենդանիներուն, նոյնպէս ամենց վերջինը կ'ըլլայ, երբ ապրի առանց օրէնքի եւ առանց արդարութեան: Արդարեւ չի կայ աւելի հրէշաւոր բան քան զինեալ անարդարութիւնը: Բայց մարդս բնութիւնէն ստացաւ իմաստութեան եւ առաքինութեան զինքերը զորս գլխաւորաբար պէտք է գործադրել իր յոռի կիրքերուն դէմ: Առանց առաքինութեան անիկա ամենայնոքի եւ ամենակատաղի էակն է, եւ անօթութեան ու կրից անասնական յափշտակումներէ զտա ուրիշ բան չունի:

Մարդս բնութեան տկարագոյն մէկ եղէգն է. բայց եղէկ մ'է որ կը խորհրդածէ:

Բնութեան եւ մարդկային բանակաւորութեան պզտիկ մէկ պարպեւր չէ, երբ մարդ, միակը կենդանիներուն մէջ, հասկնայ թէ ինչ է կարգ կանոնը, պատշաճութիւնն ու չափը՝ գործի եւ խօսքի մէջ:

Մարդս անասունէն եւ տունկէն ստորին կ'ըլլար, եթէ իրեն չաւելցնէր բանականութիւնը, բարոյական ազատութիւնը, անշահախնդիր սէրը, արուեստը, բանաստեղծութիւնը, գիտութիւնը, երկնային զգացումը: Իր բնութիւնն ուրեմն իրեն կը թոյլատրէ ըմբռնել անհունը, առատածայինը, գաղափարականը, ձգտիլ կատարելագործման եւ շնչել չունչն անմահութեան:

Այն բանը որ նուիրական կը կացուցանէ անձնաւորութիւնը, եւ իրեն կուտայ իր ազատութիւնն ու իրաւունքը, մտածութիւնն է, հոգին է, այն գերագոյն ծածն է որ անհուն արժէք մը կուտայ խիստ գիւրաթեք անօթին:

Բոլոր մեր արժանիքը կը կայանայ մեր մտածութեան մէջ:

Մարդս կը մտածէ, եւ մտածումըն

որ անքան տանջանայ աղբիւր է, աղբիւրն է նաեւ գաղափարային ուրստութեանց եւ աստուածային սքանչացումներու:

Մարդս ծնած չէ երջանիկ ըլլալու համար, այլ ծնած է մարդ ըլլալու համար իր վնասներով եւ վնասներով: Ուրեմն պէտք է գնալ կեանքին հանդէպ ինչպէս որ կը գնան կրակին հանդէպ քաջաբար, առանց իրենք իրենց հարցնելու թէ ինչպէս պիտի վերադառնան անկից:

Անանձնութիւնը բոլոր մտածութեանց բնականն է բնական, նա է որ կը ներշնչէ բոլոր քերթողները, նա է որ կը ստեղծէ արուեստագէտները, եւ հանճարը կը կազմուի:

Առանձնութիւնը նպաստաւոր է ինքնամոհիւսման, եւ ինքնամոհիւսման շնորհիւ է որ մարդ կարող կ'ըլլայ մտածման, եւ պարզել կամքի որոշ կարողութիւն մը:

Քաղաք մը որ ի գործ գնէր այն սկզբունքը թէ մարդս աւելի թանկագին է քան ճոխութիւնն եւ հարստութիւնը, խկոյն քաղաքակրթութեան գլուխը պիտի բազմէր. քաղաք մը որ մարդիկ կրթուած են իրենց անունին արժանի ըլլալու եղանակով, այդ քաղաքն աշխարհի ոստանն ու մարաքաղաքը պիտի ըլլար:

Մարդ պէտք է որ ազնիւ ըլլայ, բարի եւ օժանդակ լինի. պէտք է որ առանց թուլնալու արդարին եւ օգտակարին աշխատի, պէտք է որ աստուածութեանց պատկերն ըլլայ, զոր մենք կը զգանք մեր մէջ:

Հասարակ է. ԿԱԶ

Քաղեց ԽԱՉԻՍԱՐ

ՍԳԱՀԱՆԴԷՍ

Կիլիկիոյ Զարդիւրու Բ. Տարեկիցի Աւարով

Քաղաքիս (Երզնկա) Կրօնասիրաց Միութեան Լսարան Մասնախումբին նախաձեռնութեամբ, Զատիկի երրորդ օրը սգահանդէս տեղի ունեցաւ Լսարանի շէնքին պարտէզին մէջ, Ներկայ էր խումբ բազ-

մութիւն, անհախճաբար՝ սահմանադրութեան հոշակման առաջին խանդավառութենէն ի վեր:

Հանդէսը բացաւ վիճակիս առաջնորդ Գեր. Տ. Երուանդ Ծ. Վ. Փերտահճեան, նախ շնորհակալութիւն յայտնելով Կրօն. Միութեան, որ գեղեցիկ մտածումն ունեցած էր խորին յարգանք մ'ընծայելու ազգային անմոռանալի այն եղեռնին յիշատակին, որուն զոհ գացին անմեղ ու տաւալաւ կրիկեցիները: Երուանդ վարդ. սգաւոր բանաբան էր առաւելապէս. իր դէմքին տխրանոյշ արտայայտութիւնը, իր ձայնին մեղամաղձիկ ու հառաչանքոտ շեշտերը, պատկերներու այն տխրատեսիլ ու բնական շարքը զոր շատ դիւրին է գծել իրեն համար, զինքը կը ներկայացնեն յաւէտ իբր վշտի եւ արցունքի երգիչ կամ արտայայտիչը:

Հինգ րոպէ միայն խօսեցաւ: Դժբախտաբար երկսեռ հոծ բազմութեան մինչեւ վերջին ծայրերը չկրցաւ տարածուիլ իր ձայնը, մանաւանդ՝ սկիզբէն հանդիսականներու մէջ տիրող ընդհանուր չշուկին հետեւանքով:

Երկրորդ բանախօսը եղաւ Տ. Մկրտիչ Վ. Չլզատեան, որ քանի մ'օրուան համար միայն հիւր էր: Իբր հակապատկեր առաջնայ, Չլզատեան Վարդ. ունի գոռ ու բամբակային մը: Իր արտայայտութեան ձեւն ալ ուժգին է: Կրիկիոյ դէպքերն ու դէմքերն էին իր նիւթը: Գլխաւորաբար մեր արթնամտութեան պէտքը շեշտեց. «Մոռնանք, բաւ, բայց չքնանանք»:

Երրորդ ու վերջին բանախօսն էր Միութեան լսարանապետ Սողոմոն Էֆ. Ռահանեան: Նիւթն էր «Ձատիկը եւ Կրիկիան»՝ «Կրօնքի հմուտով շաղուուած ու կրօնքը ապրած ենք երկա՛ր դարեր: Յիսուսի խաչելութիւնը մեր աչքերէն արցունքներ լսած է միշտ, ու Յարութեան տեւտիսը՝ դարերով ուռեցողցած մեր լանջքերը: Բայց ահա աղգային խաչելութիւն մըն ալ, ու յուստենական խաչելութիւն՝ անվերջ Գողգոթայի մը փուշերուն ու ժայլուրուն վրայ: Արցունք ու յարգանք այդ խաչին: Եթէ կը ջանանք

հեռի մնալ լալկանութենէ, այդ պատճառ մը չէ որ սառն դէմքով մը ողջունենք նաեւ մեր եղբայրակիցներու զոհագործումն յիշատակները: Ազգ մը, իր յաղթութեան բարձունքներուն վրայ իսկ մոռնալու չէ իր արցունքի օրերը»։ Յետոյ, քանի մը խօսքերով Ռահանեան Էֆ. մեզ փոխադրեց այն աւերակ երկիրը, ուր գաւարուող գծախային բոցեր, գնատակներու տարափներ, արիւնոտ ձեռքեր ու սուրեր, վաւաչոտ ու վայրագ խուժան մը վերջապէս հայ կեանքը կը հնձէին անխնայ, խժոժօրէն, հրէշային վրէժխնդրութիւններով: Պատկերեց յուսավրէպ ու գողգոթ ծերերու, ծիծաղը սրտերնուն մէջ թուաւորուած երիտասարդներու եւ կոյսերու, եւ արեւազուրկ նորատի մանուկներու կիսակենդան այն անվերջ արիւնաշաղախ ու քստմնելի շարքերը, որոնք միացող փառակներու ներքեւ ճենճերուող, արխնի մէջ ննջող իրենց եղբայրներէն ու խենչ լազուկներու մէջ բզբտուող ու մոռնող իրենց քոյրերէն հազիւ կը զանազանուէին: Հուսկ յետոյ, մաղթեց յարութիւնը անվերջանալիօրէն մարտիրոսուող ու խաչուող Հայութեան:

Բազմութիւնը մեկնեցաւ տխուր տպաւորութեան տակ: Շատ մը ժպտուն աչքեր արցունք թափեցին:

Օգն ալ, որ սկիզբէն պայծառ էր, մթագնեցաւ ու անձրեւեց վերջին վայրկենին:

ՀԱՆԳԻՍԱԿԱՆ

Երգակա

ԱՆԳԼԻՍԹ Թագաւորին Թագադրութեան հանդէսին ներկայ գտնուելու համար Եւրոպայի Հայոց Առաջնորդը և Լոնտոնի Հոգաբարձութեան գիւանը ներկայացուցիչ նշանակուած ԸԼԼԱՅԻՎ, Պատր. Գոթամորդ Ս. Հայրը Անգլ. Գեոպանատունը գնաց, որոշուելու համար հայ պատգամաւորութեան ներկայութեան պարագաները: Գեոպանը յաջորդ օրը պատասխան զրկեր է թէ մասնակցողներուն ցանկերը պատրաստուած են արդէն, բայց կը խոստանայ կարգադրութիւն մ'ընել:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳԱԽԱՌԻ ԱՆԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

Գաւառներու անապահոյութեան, հաստահարութեան, առեւանգումներու, բռնի խլամաղումներու, հողային գրաւումներու խնդիրները տխուր պիտի մեղծուին մը կը ստանան, երկրին գանազան կողմերէն հասած խժգոնութեանց և անարդարութեանց նորագոյն ու ցաւաքին լուրերուն վրայ, որոնք արձագանգ գտան Օսմ. Խորհրդարանին, և Ազգ. Երեսփ. Ժողովին մէջ: Հայ մէպոսներէն Վարդգէս, Գեղամ, Տէր. Տաղաւարեան Էֆ.ները ազգու կերպով խօսեցան Օսմ. Խորհրդարանին մէջ այս ցաւալի պիտի մեղծուին վրայ, և մասնաւորապէս Գեղամ Էֆ. նշանակալից և լաւ պատրաստուած ճառով մը փաստեր յառաջ բերաւ գաւառներու գանազան կողմերը գործուած ոճիրներուն, մահափորձերուն, և ծանրացաւ մասնաւորապէս հողային գրաւումներուն վրայ: Չարսանձագիներու նոր հեռագիրը, որով իրենց իրաւունքին հաստատուիլը, և հակառակ պարագային՝ 4000 հոգիի գաղթելու նոր տեղ մը ցոյց տրուիլը կը պահանջէր, ուր տասը զրկեալ քուրդերու՝ անցեալ շաբթու Սելամլըգի արարողութեան միջոցին՝ իրենց աղգային տարազը հագած, Ահմ. Կայսեր խնդրագիր տալու դիմումը՝ տըխրահալ քէօր Հիւսէյին փաշայի և անոր որդւոյն հողային գրաւմանց ևն. դէմ բողոքելու համար, և թուականով, անունով, տեղով հաստատուած ոճիրները, որոնք կը հրատարակուին ամէն օր օրաթերթերու և մասնաւորապէս Ազատաստի մէջ, բաւականէն աւելի համոզիչ պէտք է ըլլային ներքին գործոց նախարարին որ փաստեր կը պահանջէր, և իսլամ Երեսփոխաններու մեծամասնութեան որ տակաւին խոր անտարբերութեամբ կը լսեն գաւառներու մէջ անդորրութեան վերահաստատման, և տարրական արդարութեան մը անաչառ գործադրութեան մասին եղած պահանջումները:

Եւ ճշմարիտ արդարասէրները վհատութեան մատնող պարագան այն է որ

գաւառի թէ կեդրոնի իշխանութիւնները յանցաւորները պատժելու մէջ խուլ կը մնան, և հազուադէպ արդարասէրները, և պետական ճշմարիտ շահերուն փտակից խժամիտ պաշտօնատարները՝ ինչպէս Սեբաստիոյ լուսամիտ կուսակալ Էմին պէյ, Կեսարիոյ կառավարիչ Ճէմալ պէյ՝ պաշտօնէ հեռու կը պահուին, Հայերը պաշտպանած ըլլալուն համար: Իսկ այն մեծ կամ պզտիկ պաշտօնեաները որոնք Հայերն ապստամբ ներկայացնելու անխղճութիւնը կ'ունենան՝ աննշան դէպք մը առիթ առնելով, անոնց բոլորն ալ անպատիժ կը մնան և ի պատուի և ի պաշտօնի են, ինչպէս Շ. Կարահիսարի կառավարիչը, Բում. տիկինի և Ահմայ գայմագամները, ևն., որոնց շարքը կարելի է երկարել որքան որ կ'ուզէք:

Տխուր է ասիկա:

Ժամանակ է որ հայ ազգը՝ իր Երեսփ. Ժողովին միջոցաւ հանդիսաւոր դիմում մ'ընէ առ որ անկ է, բողոքի արդար արտայայտութիւն մը: Ժամանակ է՝ մանաւանդ՝ որ Օսմ. Հայ երեսփոխանները, լաւ պատրաստուած ու փաստալից ճառերով ջանան ընդհ. վիճաբանութիւն մը յառաջ բերել Օսմ. Խորհրդարանին մէջ, ուր հակառակ շատ մեկտրաններու յայտնի և հակակիր չկամութեանց, մենք փտահ ենք բազմաթիւ համաձայնեաներ ու համակիրներ պիտի գտնեն իրենց, ոչ միայն քրիստոնեայ երեսփոխաններու, այլ և իսլամ ազատամիտ հայրենակիցներու մէջ:

Օհ, Ատանայի համար քուէարկուած 10.000 ոսկիի ողորմութիւնը որ մեր երեսին կը նետուի, չի բաւեր ամոքելու մեր վիշտերը, սքողելու պօռացող անարդարութիւնները:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթոլիկոսական ընտրութեան խնդիրը լուրջ զբաղման առարկայ եղած է մեր Կովկասահայ եղբայրներուն մէջ, ուր օրաթերթիկն եւ շաբաթական կամ ամսօրեայ Հանգէսները իրենց զրէթէ բոլոր թիւերուն մէջ լուր մը, տեսութիւն մը, կար-

ծիք մի ունին անպատճառ Բնորելիներ մէջ տեղ կը գրուին, անոնց իւրաքանչիւրին արժանիքին վրայ ծանրանալով, կամ անբաւականութիւնը մէջտեղ գրուելով: Սահմանագրութիւնն ասոյին երեսօթը տարբեր է բոլորովին. ընդհանուր անփութութիւն մը, անտարբերութիւն մը, թուութիւն մը կ'երեսայ ամէն կողմ: Պատրիարքարանէն մէկ քանի շաբաթ առաջ շրջաբերական զրկուած էր գաւառները, որով կը յանձնարարուէր ընտրել պատգամաւորներ: Անցեալ շաբթու Ռուս դեսպանատան թարգման Տիար Պօչնարեան Ազգ. Պատրիարքարան գալով հաղորդած էր թէ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան հրաւիրաթուղթերը հասած են, եւ այս շաբթու ալ հաղորդուելով, իսկին ժողովը խորհրդակցութիւն կատարեց:

Ահաւասիկ—առաջին անգամն ըլլալով— ընտրութեան օրէն եօթն ամիս առաջ կը հասնին հրաւիրագրները: Հետեւապէս պէտք է սկսիլ պատգամաւորներու ընտրութեան, որովհետեւ ձմեռուան խստամբեր հղանակին կը հանգիպի ընտրութիւնը: Պէտք է մանաւանդ լուսարանուիլ, ճանչնալ Ռուսահայ թէ Թրքահայ եկեղեցականները, մէջտեղ զննել անոնց գործունէութիւնը: Հայոց ընդհանրական Հայրապետի դերը շատ կարեւոր ու վճռական է մանաւանդ ներկայ ճգնաժամային դրութեան մէջ: Անցեալին փորձառութենէն անհրաժեշտ է օգտուիլ. մետատաներորդ ժամուն արթննալով, հապճեպ կերպով կատարուած ընտրութիւններ կը վախճանք որ չկարենան լաւագոյն արդիւնք մը տալ:

Ա Ջ Գ. Ժ Ո Ղ Ո Վ Ը

Ազգային ժողովի ներկայ աարւոյնոր նստաշրջանի առաջին նիստն ալ նոյնքան ամուլ եղաւ, որքան նախորդ շրջանի վերջին նիստը: Նշտնակելի կարեւոր իրողութիւնն էր այդ նիստին մէջ՝ ընթերցումը Տեղապահ Ս. Հօր տեղեկագրին որ իսկին ժողովոյ մէջ կարգացուած էր նոյն

առտուն Ազգ. ժողովին մէջ այդ տեղեկագիրը կարգացուեցաւ: Պոնիակ, դուրս հանուելով նոյն իսկ լրագրաց ներկայացուցիչները, թէ եւ ի վերջոյ որոշուեցաւ Ազգ. ժողովոյ ատենագրութեան մէջ տպել, յիշուած յարաբերական խնդիրները արդէն ամիսներէ ի վեր յեղյեղուած ըլլալով թերթերու մէջ, եւ չունենալով գաղանի պահուելու արժանի ու եւ ծանրակշիռ հանգամանք: Ժողովը յառաջիկայ նիստի մը մէջ այս տեղեկագրին վրայ կարեւոր փոխանակութիւն մ'ընել որոշելէ ետքը, ձեռնարկեց Մայր Դիւանի ընտրութեան, որ օրակարգի Ա. խնդիր նշանակուած էր: 66 քուէարկուներու մէջէն 40 քուէով Ա. Ատենապետ վերընտրուեցաւ Մանուկ էֆ. Աղարեան: Յետոյ Բ. եւ Գ. ատենապետ ընտրուեցան՝ 70 քուէարկուներու 44 քուէով Հրանդ Ասատուր էֆ. Բ. եւ Հայկ էֆ. Խօճասարեան 37 քուէով Գ. ստենապետ: Ատենագրիներու ընտրութիւնն ալ կատարուելով Ա. Ատենագրի ընտրուեցաւ Օննիկ էֆ. Զիֆթէ Սարաֆ, Բ. Ատենագրի՝ Մարկոս էֆ. Նաթանեան, եւ Գ. Ատենագրի՝ Զարեհ էֆ. Խօրասանճեան: Այս կերպով անցեալ շրջանի դիւանը վերահաստատուեցաւ: Գրեթէ ամբողջութեամբ Բ. Ատենապետ Պարզեւ էֆ. Փափազեան, եւ Ա. Ատենագրի Արարհամ էֆ. Տ. Յակոբեան ընտրելութենէ բացարձակապէս հրաժարած ըլլալուն համար չվերընտրուեցան: Նիստը դադարեցաւ ժամը ճին առանց կատարուելու կրօն. եւ Բաղ ժողովոյ ընտրութիւնը, որ յաջորդ նիստին թողուեցաւ:

Հ Ա Մ Ա Գ Ո Ւ Մ Ա Ր Ը

Կրօն. ժողովն անցեալ շաբթու Դ. օր, վերջ տալու համար այն յայտնի հակասութեան, որով ամբաստանութեան կամ դատապարտութեան տակ գտնուող եկեղեցականներէ ոմանք զրկուած կը մնան ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունքէն, մինչ ուրիշներ կը վայելեն այդ իրաւունքը, որոշեց որ ու եւ ժողովէ կամ իրաւունքէ զիտողութեան առարկայ հղող եկեղեցա-

կաններ առ հասարակ ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունքէն զազրին, մինչեւ որ իրենց մասին կարգադրութիւն մ'ըլլայ: Այս որոշումը պիտի գործադրուի հինգ եկեղեցականներու մասին, որոնք վարչական ժողովոց ընտրութեան առթիւ պատրաստելիք հռապատիկ ցանկին մէջ չպիտի գրուին: Այդ հինգ եկեղեցականներն են Տ. Տ. Օրմանեան եւ Երէցեան սրբազանները, Տիրայր Վ. եւ Համազասպ եւ Գալուստ քհնեբը:

Կրօն. ժողովոյ տեսակէան այն եղած է որ եթէ ասոնք ցանկին մէջ գրուին եւ քուէ չահին, դիտողութեանց առարկայ պիտի ըլլան Աղգ. ժողովին մէջ, եւ հոն իրենց նկատմամբ ծանր ակնարկութեանց առիթ տրուելով, այլ եւս չպիտի կրնան իրենց եկեղեցական պարտականութիւնն ի գործ դնել: Ժիշտ այդ նկատումը մէջ կը բերէինք մենք ալ եկեղջ. երեսփոխաններու ընտրութեան առթիւ գումարուած Համագումարին վրայ մեր կարծիքն յայտնելու միջոցին: Հետեւապէս համամիտ չենք կրնար գտնուիլ այն մէկ քանի քահանայ եղբայրներուն, որոնք կը բողոքեն եղբր Կրօն. ժողովին այս կտրգադրութեան դէմ: Ասոնք իրենց բողոքով բարեկամութիւն չէ որ կ'ընեն այս կամ այն եկեղեցականին. առտե՛լ եւս կը վտանգեն անոր վարկն ու բարի համբաւը, առիթ դառնալով նոր քննափնտրութեանց: Միւս կողմէ Աղգ. իշխանութեանց պարտքն է, խղճի անտեղիտալի պարտք մը, շուտով անաչառ քննութեան առարկայ ընել եղած ամբաստանութիւնները՝ եւ ելք մը տալ անոնց, որպէս յանիրաւի ամբաստանուող այս կամ այն եկեղեցականը զրկուած չմնայ իր արդար իրաւունքէն, իսկ ճշմարտապէս յանցաւոր մըն ալ չմնայ եկեղեցական դիրքի ու աստիճանի մէջ: Ալ ժամանակ է մաքրելու եկեղեցականութիւնը: Օրէնքը իր բոլոր անաչառութեամբ պէտք է կիրարկուի հաւասարապէս ամէնուն համար ալ, եւ շուտով Հերիք է այսչափ ձգձգում:

ԲԱՂԵՇԷՆ հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ. Գալէմեան ժամանած է իր պաշտօնատեղին:

ՖՈՒՆՈՒՋԻ վանհայր Տ. Նիկողոս Եպիսկ. ի մահը ծանուցին անցեալ շաբթու օրաթերթերը: 85.90 տարեկան եկեղեցական մըն էր. քաջ եւ յանդուգն անձի մը համբաւն հանած՝ Զէյթունի եւ շրջականերուն մէջ, եւ իբր խմբապետ ճանչցուած կառավարութեան կողմէ, որ երկու անգամ մահապարտութեան վճիռ տուած է իրեն համար, բայց ներման արժանացած է: Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն մէջ տիտեր դեր մը ունեցաւ սակայն, Ալէաթձեան Ս. ի կաթողիկոսութեան դէմ ըմբոստանալով՝ ժամանակին ոստիկանական նախարարին ազդեցութեամբ Կիրակոս Եպ. կաթողիկոս ձեռացնել ուզողներուն մէջ գտնուելով: Իր այս արարքը, որ մեծապէս խախտեց իր վարկը Կիլիկիոյ մէջ, ոմանք կ'ուզեն վերագրել իր անուս եւ միամիտ ըլլալուն, եւ ուրիշներ՝ իր հայրենաքաղաքեան, որովհետեւ կարելի չպիտի ըլլար իրեն՝ Կիլիկիա երթալ Պոլիսէն: Իրողութիւնն այն է որ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը պաշտօնի գլուխ անցած ատեն հայրաբար ներել հաճեցաւ, եւ ֆունուզի վանհայրը կրցաւ կաթողիկոսի օժման ալ մասնակցիլ, իրրեւ վաղեմի միաբան:

ՍԱՄԱԹԻՈՅ Աղգ. վարժարանին Տնօրէն Միսաք Սուրեան արապստներ է իր պաշտօնէն՝ անչափահաս աշակերտուհիներու հանդէպ գործած անբարոյական արարքներուն համար: Թաղեցիք, վերջին ծայր յուզուած այս անուր գայթակղութիւններուն վրայ, նամակ գրած են Սկիւտար, Իճատիէի ընտրողներուն, որ երեսփոխանութենէ վտարեն Մ. Սուրեանը, որ նոյն թաղին Աղգ. Երեսփոխաններէն մէկն է: Թաղ. Խորհուրդն եւ կրթական Տեսուչ Բալանթարեան էֆ. մի առ մի հարցաքննած են աշակերտուհիները, եւ զարհուրելի յայտնութիւններ երեւան ելած են: Կը լսուի թէ Պետումն. Խորհուրդը Կրթական նախարարութեան պիտի դիմէ, որ Սուր.

եանի ձեռքը գտնուած վարժարանի արտօնագիրը ետ առնուի:

ՏՐԱՊԻԶՈՆՑԻՆԵՐԸ յաջող եւ գիտակից շարժում մը ըրած էին, իրենց Առաջնորդ ընտրելով Երուսաղէմի միաբանութեան անդամներէն շատ պարկեշտ, եւ օգտակար ըլլալու անկեղծ փափաքով տոգորուած եկեղեցական մը, Տ. Սերովբէ Վրդ. Սամուէլեան, որ նոյն միաբանութեան հաւանութիւնն ստաց լելէն հոգը սիրայօժար ընդունած է այս պաշտօնը, եւ այս շարժում իսկ կը մեկնի իր պաշտօնատեղին: Յաջողութիւն կը մաղթենք, եւ կար եւ կարողութիւն՝ իրագործելու իր ազնիւ նպատակները, հանրագումար գործունէութեամբ մը:

ԲԵՐԱՅԻ աւագներէց Տ. Ներսէս քհնյ.ի վախճանմամբ նոյն պաշտօնը բաց մնացած ըլլալով, քահանայից դասը արժանաւոր ընտրութիւն մ'ըրած, է իրեն աւագներէց նշանակելով Ազգ. Երեմիոսիան եւ Կրօն. Ժողովոյ անդամ Տ. Խորէն քհնյ. Յարութիւնեանը, պարկեշտ դէմք մը՝ հայ քահանայութեան մէջ: Զերմապէս կը շնորհաւորենք իր պաշտօնը, եւ կար եւ կարողութիւն կը մաղթենք:

ՎԱՏԻԿԱՆ, կաթողիկոս բարեպաշտներու համար արգելուած զիրքերու ցանկին (էնտէքս) մէջ անցուցեր է Օրմանեան Ս. Ֆրանսերէն վերջին գործը՝ L'Eglise Arménienne, Son Histoire, Sa Littérature: Աւրախութեամբ կ'իմանանք թէ Ն. Սրբազնութիւնն աւարտած է այդ կարեւոր գործին հայերէն թարգմանութեան շքեղ տպագրութիւնը, որ հրատարակուեցաւ շարժում:

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ եւ **ԿՐԹԱ. ԿԱՆ** խնդրոց վրայ հինգ Պատրիարքարաններու (Յունաց, Հայոց, Հայ-հոռմէակահաց, Պուլկարաց եւ Քաղզէացոց) միջեւ համաձայնութիւն մը գոյացած է կառավարութեան ըլլալիք զիմուհներուն վրայ, եւ իւրաքանչիւրին կողմէ համիմաստ թագրիրներ մատուցուած են Բ. Դրան: Սիւնիս (նախկին Թանիս) որ համակիր ու գիով չի գիտեր այդ համաձայնութիւնը,

թէեւ զրած էր ոչ հողային խնդիրն ալ մէկն է համաձայնութիւն գոյացած կէտերէն, բայց խօսքն անգամ չկայ ատոր, որ զուտ Հայոց վերաբերեալ հարց մ'է: Ե իայն զինուորագրութեան եւ կրթական հարցերն եղած են խորհրդակցութեան առարկայ, մատուցուած թագրիրներով յայտնուած են այն բողձանքները եւ պահանջները, թէ կրթական եւ թէ զինուորագրական խնդրոց մասին, որոնց վրայ յաճախ խօսուած է Ազգ. թերթերուն մէջ:

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ Պ. Ա. Մանթաշեանի մահը ընդհանուր սուգի արտայայտութեան առիթ եղած է աշխարհի զանազան կողմերուն մէջ ուր որ Հայ կայ: Հոգեհանգստեան պաշտամունքներ, սգահանդէսներ տեղի ունեցած են Ռուսահայոց գրէթէ բոլոր քաղաքներու եկեղեցիներուն նաեւ, նոյնպէս Թրքահայոց զանազան քաղաքները, նաեւ Եւրոպա, մասնաւորապէս Լոնտոն եւ Բարիք: Յուդարկաւորութիւնը տեղի ունեցած է մեծաշուք հանդիսաւորութեամբ, ի Թիֆլիս, ուր սուգը միջազգային հանգամանք առած է. այդ օրը Թիֆլիսի բոլոր վաճառատունները փակ մնացած են ի նշան յարգանաց եւ սգոյ: Ազգ. Պատրիարքարանի կողմէ ուղղուած հեռագրի մը համաձայն, ի զիմաց Թրքահայոց ներկայ գտնուած են Տ. Եփրեմ Եպիսկ. եւ Պ. Պ. Մելիք Ազարեան եւ Սամսոն Յարութիւնեան:

ՔՂԻԻ առաջնորդ Տ. Պսակ վրդ. Կարին: գացած է առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.ի հրաւերով, Քղիի ազգ. յարաբերական խնդրոց մասին խորհրդակցութիւններ կատարելու:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՆ այս Գշ.ի նիստին մէջ հաստատեց Տ. Հրանտ Վ. Յովսէփեանի քարոզչութիւնը՝ Պէշիքթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյն, եւ Նառլը Գափուի քարոզիչ կարգից Տ. Վարդան Վրդ. Գասպարեանը:

ԳՈՒՐՈՒ ԶԷՇՄԷԻ Եկեղեցւոյն Տ. Սուքիաս քհն. Պալղճեան, գոհութեամբ կ'իմանանք թէ աւագերիցութիւն ստացած է Կրօն. Ժողովոյ որոշմամբ: Մեր շնորհաւորութիւնները:

ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿ ՏԱԳՆԱՊԸ

Հայ-Հռոմէականաց Ազգ. Ժողովը գուժարեւելով նախորդ շաբթու, լսեց իր կողմէ կազմուած յանձնաժողովին շրջաբերականը, որով կը ծանուցուէին ժողովին նախապէս տուած որոշումները, և կը հրաւիրուէին մայրաքաղաքիս և գաւառաց ժողովներն և խորհուրդները, ըստ առաջնոյն սրտի և մտքի կատարեալ անգործութեամբ շարունակել անվճատ իրենց պաշտօնը: Յետոյ կարդացուեցաւ Թէրզեան Պատրիարքին ուղղուած նամակը, որով յանձնաժողովը կ'իմացնէ թէ իր զրկած երկու պարսաւագիր նամակները միաձայնութեամբ մերժուած են Երեսփ. Ժողովէն, թէ հասարակութեան իրաւունքներուն ժխտումը ամենաժանր վնասներ և աղետալի հետեւանքներ անխուսափելի կ'ընծայէ, որուն ամբողջ պատասխանատուութիւնը միմիայն իրեն (Թէրզեանի) կը պատկանի. ուստի կը յորդորեն զինքը որեւէ կենայ իր ապօրէն ընթացքէն, և տեղի չտայ ժողովուրդին՝ փոխադարձ ընթացքի մէջ գտնուելու: Կարդացուեցան նաև Իգմիրէն և Պարտիզակէն հասած հեռագրեր, որով շնորհակալութիւն և համամտութիւն կը յայտնուէր Երեսփ. Ժողովին: Կարդացուեցան նաև 50 աղգասէր երիտասարդներու, և 23 համալսարանականներու կողմէ երկու հանրագրեր, որոնցմով կը մերժուի Թէրզեանի ազգակործան արարքը, իր հրաժարումը կը պահանջուի, և կը խընդրուի Երեսփ. Ժողովէն՝ շարունակել իր պաշտօնը: Այս ամէնը, որոնք ի յայտ կը բերեն ժողովրդեան բուն զայրոյթը, սրտապնդող տպաւորութիւն մը յառաջ բերին երեսփոխաններուն վրայ, որոնք շարունակեցին նիստը, քննելով Թէրզեանի աչքին փուշ եղող կանոնագիրը, և լսելով Գր. Մինէճեան էֆ.ի տեղեկութիւնները՝ ի մասին զինուորական և կրթական խնդրոց առթիւ միջազգային յանձնաժողովին մէջ գոյացած համաձայնութեան:

✱* Ուրբաթ օր վերստին նիստ ունէր Երեսփ. Ժողովը, ատենապետութեամբ երամ էֆ. Երամեանի: Այս նիստին մէջ

ևս կարդացուեցան երկու հեռագրեր՝ Տիարպէրիէն և Էնկիւրիէն՝ որոնցմով Հայ-Կաթոլիկ ժողովուրդը իր բացարձակ համամտութիւնը կը յայտնէր Երեսփ. Ժողովին: Նշանակելի է որ Էնկիւրիէն իսկ, որ Հայ-Կաթոլիկ անդրալեռնականութեան կորիզը կը նկատուէր, բողոք կուգար Թէրզեանի դէմ: Ուշագրաւ էր նաև Պոլիսէն բուն լեզուով գրուած հանրագրութիւն մը, որով վստահութիւն և աջակցութիւն կը յայտնուի ժողովին, և կ'աւելցուի սր եթէ երեսփոխանները չկարենան ազգին բաղձանքներն իրականացնել, ինքը՝ ժողովուրդը պիտի դիմէ իր յարմար դատած միջոցներուն, իր շահերը պաշտպանելու համար Թէրզեանի և անոր համախոհ կղերին դէմ: Այս գրութիւնները սրտապնդեցին երեսփոխանները, որ շարունակեցին իրենց աշխատութիւնները: Ժողովը իր վերջնական դիրքը որոշելու համար կը սպասէ Թէրզեանի տալիք պատասխանին: Պապին ուղղուելիք յիշատակագիրը տակաւին պատրաստուած չըլլալով, անոր ընթերցումը թողուեցաւ յառաջիկայ նիստին:

ՀԱՅԿԱԿԱՆ Բարեգործական Ընդհանուր Միութեան Պալատի անդամները հրապարակ են ներկայ գտնուիլ յառաջիկայ Կիրակի. Մայիս 15/28, ժամը 10.30ին (Ը ե.) Բերայի Ազգ. Արուեստանոցին մէջ՝ ընկերական հաւաքման մը, ուր Տեղական Մասնաժողովը Միութեան տարեկան գործաւնութեանց տեղեկագիրը պիտի հաղորդէ:

ԱՏԵՆԱՊԵՏ

Տեղական Մասնաժողովայ

Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲՆՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲՆՆՅ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ՆՍՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ

«Ի ՊԵՏԱ ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԱՑ»

Գրեց

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Գ. Տպագր.

(Հայրիկի լուսանկարով)

Հրատարակութիւն Թ. ԳՐԸՃԵԱՆ գրատան: Գին 7 ղշ.

ՍՄԲԱՏ ԲԻԲԼՈՑԻ ՆՈՐ ՎԷՊԸ

Ի Ն Ն Ս Ո Ւ Ն Վ Ե Ց

Համակրելի վիպագրին այս վէպը, մինչեւ հիմա հրատարակուածներուն մէջ կրնայ համարուիլ ամենէն յուզիչը, ՍԱՒԹԻՈՅ ՄԵԾ ՄԱՐՏՆՉՈՒՄԸ. ՊԱՆՔԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ. ՊՈԼՍՈՅ, մանաւանդ ԽԱՍԳԻՒՂԻ ՋԱՐԴԸ. իրական, պատկերներ, ցնցող մանրամասնութիւններով, Ամէն օր կը հրատարակուի պրակ առ պրակ, պրակը 10 բարա: Աւարտելէն ետքը գինը պիտի կրկնապատկուի: Դիմել Պապը Աղի, Իգճաւ իսկ Ստեփան Էֆ. Բիւրճեանի:

ԳԻՆ 1 ՂՐՈՒՅ